

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մեկնարկել է 2007թ.-ին: Ներկայումս մեկնարկել է Ծրագրի նոր՝ 2014-2020թթ. շրջափուլը:

Ծրագրի հիմնական նպատակն է հասնել ամուր տարածաշրջանային համագործակցության և գործընկերության, խթանել Սևծովյան ավազանի հարակից շրջաններում տնտեսական և սոցիալական զարգացումը, համատեղ աշխատել համընդհանուր մարտահրավերներին դիմակայելու համար, ինչպես նաև խթանել երկրների միջև համագործակցությունը: Ծրագրի շահառու են հանդիսանում ութ երկրներ՝ Բուլղարիան, Թուրքիան, Հայաստանը, Հունաստանը, Մոլդովան, Ռումինիան, Վրաստանը և Ուկրաինան:

Ծրագրի հավանական շահառուներ կարող են հանդիսանալ ՀՀ պետական կառավարման մարմինները, ՀՀ մարզպետարանները և քաղաքապետարանները, ՀՀ հասարակական կազմակերպությունները, շահույթ չհետապնդող կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները, մշակութային և հնագիտական ասոցիացիաները, զբոսաշրջության և տարածաշրջանային զարգացման գործակալությունները, հատուկ պահպանվող տարածքները և հետազոտական հաստատությունները:

Համաժողովին մասնակցելու հետաքրքրության դեպքում, խնդրում ենք շահառու կազմակերպություններին՝ ս.թ. սեպտեմբերի 7-ը ներառյալ գրանցվել <https://blacksea-cbc.net/news/archive-news/partner-forum-in-yerevan-23-october-2018/>

հղումով: